թիւն են տեսնում, մտածելով, կարելի է իրանց տղամարդը նրանցից մէկին բերէ իր հետ: Երեւի այդ էր պատճառը, որ երբ մտանք տէր հօր խրճիթը, այնտեղ գտանք մի պատրաստի սեղան: Նա հրաւիրեց նստել սեղանի մօտ: Ռեսի ճոխ ընթրիքից յետոյ, այժմ ո՞վ ախորժակ ունէր ուտելու: Բայց ուզես, չուզես, պէտք է մի քանի պատառ ուտես, եթէ ոչ, տան տիկնոջը սաստիկ վիրաւորած կը լինես:

Տէր հօր խրճիթը թէեւ ռեսի տան մեծութիւնն ու վայելչութիւնը չունէր, բայց բաւականին կոկիկ եւ սիրուն էր. ամէն տեղ երեւում էր կարգ, ամէն տեղ երեւում էր մաքրութիւն: Բոլոր տանեցիք քնած էին միեւնոյն հարկի տակ, ուր մտանք մենք: Միայն երէցկինը եւ նրա հարսը սպասում էին մեզ: Սիւնի վրայ դրած միակ ճրագը աղօտ լոյս էր սփռում փոքրիկ սենեակում, եւ մեր շուրջը լսւում էր քնած ընտանիքի խաղաղ շնչառութիւնը:

Տէր հայրը իր լեզոի բոլոր ճարտարութիւնը գործ էր դնում, որ զբաղեցնէ ինձ: Բայց ոչ նրա համեստ սեղանը, ոչ նրա պարզ, սրտից բխած հայրական խօսակցութիւնը, եւ ոչ երէցկնոջ միամիտ գուրգուրանքը, ոչինչ չէր գրաւում ինձ: Ինձ չէր գրաւում եւ մի գեղեցիկ դէմք, որ քնի մէջ, մոռանալով գեղջկուհու ամաչկոտութիւնը, վերմակը կիսով չափ մի կողմ էր ձգել եւ երեւան էր հանել մի հրաշալի կուրծք: Այո, ոչինչ չէր գրաւում ինձ: Իմ բոլոր ուշքը, միտքը գրաւել էր երիտասարդ վարժապետը: Նրա մասին էի մտածում, նրա այրական սիրելի պատկերն էր իմ աչքի առջեւ:

Երբ տէր հայրը սկսեց նրա մասին խօսել, ես մեծ ուրախութեամբ լսում էի:

— Եկեղեցու բակումն է բնակւում, — ասաց նա, — այնտեղ, դպրոցին կից, իրա համար երկու սենեակ է շինել տուած: Այդ սենեակները մեր խրճիթների նման գետնափոր չեն, դուք, ի հարկէ, առաւօտեան կը տեսնէք, թէ որքան յարմարութիւններով են շինուած: Նա միշտ խորհուրդ է տալիս, յորդորում է գիւղացիներին, որ դուրս գան գետնի տակից եւ այն ձեւով բնակարաններ շինեն: Ասում է, որ գետնափոր խրճիթը շատ վնասակար է առողջութեան, այնտեղ չէ թափանցում ո՛չ արեւի լոյսը եւ ո՛չ օդի մաքրութիւնը:

— Գիւղացիք հետեւո՞ւմ են նրա խորհուրդներին, — հարցրի ես:

— Շատերը հետեւում են, ով որ նոր տուն է շինել տալիս, այնպէս է շինում, որպէս նա ցոյց է տալիս: Նա մեզ բացատրում է, թէ տան ձեւը ոչ միայն մեծ նշանակութիւն ունի մարդու առողջութեան վերաբերութեամբ, այլ սաստիկ ազդում է նրա բնաւորութեան, մտքի եւ հոգեկան տրամադրութեան վրայ: Եթէ հայ գիւղացին, ասում է նա, այդքան ծածկամիտ, նենգաւոր եւ